Հաստատված է Խաչատուր Աբովյանի
անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2012 թվականի
հոկտեմբերի 31-ի նիստում
Ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան

ՀՊՄՀ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.Գնահատման ընդհանուր դրույթներ

ՈՒսանողների օբյեկտիվ, ճշգրիտ և արժանահավատ գնահատման համակարգը կրեդիտային ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարևոր մասն է: Գնահատումը միջոց է հավաստելու մի կողմից ուսանողների առաջադիմությունը, յուրացրած գիտելիքի մակարդակը, ստացված վերջնարդյունքը, մյուս կողմից դրա համապատասխանությունը կրթական նպատակներին և խնդիրներին::

Ուսումնական գործընթացի բազմագործոն, համալիր և ճկուն ձևերի ներդրման, ուսումնական գործընթացի առաջընթացը խթանելու և ուսանողների գիտելիքների գնահատման գործում առավել անկողմնակալություն, թափանցիկություն և օբյեկտիվություն ապահովելու նպատակով. ՀՊՄՀ-ում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար կիրառվում է գիտելիքների գնահատման *կիսամյակային* համակարգ, որի հիմքում դրված է կիսմյակի ընթացքում ուսուցանվող առարկաներից գիտելիքի գնահատում կրեդիտային հենքով՝ ընթացիկ, միջանկյալ ստուգման և հանրագումարային ամփոփումների տեսքով, վերջնական գնահատումը՝ կիսամյակի ընթացքում դրսևորած գիտելիքի կուտակային միավորների հիման վրա:

Ուսանողի գիտելիքների գնահատումը հանրագումարում չափագրում է դասընթացի վերջնարդյունքում կարևորվող և ձեռք բերված գիտելիքի, հմտությունների ու կարողությունների մակարդակը, ապահովում հետադարձ կապը, որպես որակի ապահովման ու ուսուցման գործընթացի կատարելագործման հաջողության ցուցանիշ:

ՈՒսանողի գնահատման ձևերն պետք է լինեն՝

օբյեկտիվությունը,

մատչելիությունը,

արդյունավետությունը,

չափելիությունը,

թափանցիկությունը:

ՀՊՄՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց՝ դյուրացնելով դասընթացի առանձին բաժինների յուրացմամբ առարկայական հմտությունների և կարողությունների ձեռքբերման ընթացքը և խթանելով ուսանողի անհատական և ինքնուրույն արտալսարանային աշխատանքը,
- ուսումնառության գործընթաց ներմուծել մրցակցության տարրեր, բարելավել դասա հաճախումներն ու ուսանողի ակտիվությունը, բարձրացնել ուսանողի կատարողական կարգա պահությունը, ապահովել առարկայի ուսուցման հետադարձ կապը,
- անհատական/ թիմային առաջադրանքների և ընթացիկ, միջանկյալ, հանրագումարային ամփոփիչ ստուգումների օգնությամբ բարելավել դասընթացի գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը՝ գիտելիքների ու կարողությունների գնահատման ընթացքում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչներ և դրանց կարևորության աստիճանը,
- ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատում՝ ըստ մասնագիտության կրթական ծրագրի բնութագրիչի կոմպետենցիաների և ուսուցման վերջնարդյունքի ներկայացվող պահանջների:

ՀՊՄՀ-ում ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը սահմանում է գնահատման և նշագրման չափանիշներ: Գիտելիքի գնահատումները կատարվում է ինչպես թվային այնպես էլ տառային նշագրով:

Օգտագործվող գնահատման սանդղակը հնարավորություն է տալիս հաշվարկել կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորը:

Օգտագործվող գնահատման սանդղակը հնարավորություն է տալիս հաշվարկել ուսանողի միջին որակական գնահատականը /ՄՈԳ/ կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման նպատակով :

2. Գիտելիքների մակարդակի վերահսկման համակարգը.

Կրեդիտային և մոդուլային ուսուցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում կիրառվում են ուսանողների գիտելիքների վերահսկման հետևյալ ձևերը.

- ընթացիկ ստուգում

- միջանկյալ ստուգում
- հանրագումարային ամփոփում
- շրջանավարտների ամփոփիչ ավարտական պետական որակավորում

2.1. Ընթացիկ ստուգումներ

ա/Ընթացիկ ստուգումը, միջանկյալ ստուգումների միջև ընկած ժամանակահատվածում, ուսանողների գիտելիքների աստիճանական ստուգման և գնահատման օպերատիվ ձև է, որը որպես կանոն կիրառվում է գործնական և լաբորատոր պարապմունքների և սեմինարների ընթացքում :

բ/Ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ լսարանային հարցում-պատասխանները, հաղորդումները, զեկույցները, գործնական/ լաբորատոր /թեստային աշխատանքների, առաջադրանքների կատարումը, ռեֆերատները, տնային աշխատանքների, հանձնարարությունների կատարումը և այլն:

գ/Ընթացիկ ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածության մակարդակը գործնական, լաբորատոր և սեմինար պարապմունքներին, ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքը, ուսումնական նյութի յուրացման աստիճանը, լսարանային աշխատանքներին մասակցության մակարդակը և այլն:

դ/Ընթացիկ ստուգման ցանկացած ձևում դասախոսն իրականացնում է տվյալ կուրսի կամ հոսքի ուսանողների անհատական կամ թիմային պատրաստվածության մակարդակի բացահայտումն ու գիտելիքների որակի գնահատումը:

ե/Ընթացիկ ստուգման արդյունքները գնահատվում են տառային սանդղակով (A-F), նրա թվային համարժեքով (0-4) և վարկանիշային գնահատմամբ (1-100):

զ/Ընթացիկ ստուգման գնահատման չափանիշները և գործոնները քննարկվում և հաստատվում են համապատասխան ամբիոնի կողմից համաձայն համալսարանում սահմանված նորմերի և դասախոսների կողմից արձանագրվում համապա տասխան առարկայի նկարագրում:

է/ Ընթացիկ ստուգումներն անց են կացվում ըստ առարկայական նկարագրի տվյալ դասընթացը վարող դասախոսի կողմից,առարկայի դասացուցակով հատկացված ժամերին:

ը/ Տվյալ դասընթացի գործնական,լաբորատոր և սեմինար պարապմունքներին ուսանողի բացակայության դեպքում ընթացիկ աշխատանքի ստուգումը չի իրականացվում և կարող է ազդել ուսանողի կուտակային գնահատականի վրա:

2.2. Միջանկյալ ստուգում

ա/ Միջանկյալ ստուգումը ը ուսանողի գիտելիքների վերահսկման ձև է՝ ուսանողի կողմից ուսումնական առարկայի ծրագրի համապատասխան տրամաբանական թեմատիկ հատվածի յուրացման որակի ընդհանրական վերահսկում, որն անց է կացվում ուսումնական ներառարկայական յուրաքանչյուր մոդուլի ավարտին՝ նախորոշված ձևերին ու ժամանակացույցին համապատասխան:

բ/ Միջանկյալ ստուգումը նպատակ ունի խթանել ուսանողների լսարանային և ինքնուրույն աշխատանքները, ապահովել առարկայի յուրացման անընդհատությունը, բարձրացնել յուրացման արդյունավետությունը՝ ուսումնական առարկայի կիսամյակային դասավանդման ողջ ընթացքում:

գ/ Միջանկյալ ստուգումն իրականցվում է տվյալ առարկայի ծրագրի համապատասխան տրամաբանական թեմատիկ ամբողջական հատվածի յուրացումը ստուգելու և գնահատելու համար: Միջանկյալ ստուգումն անց է կացվում դասընթացի ծրագրի համապատասխան տրամաբանական թեմատիկ ամբողջական հատվածի ավարտին, համաձայն համալսարանի միջանկյալ ստուգումների համար սահմանված ժամանակացույցի և հանդիսանում է ստուգման պարտադիր ձև:

դ/ Միջանկյալ ստուգումը,որպես կանոն, իրականցվում է գրավոր՝ տեսագործնական ստուգողական աշխատանքների, հանձնարարականների, պրոբլեմային խնդիրների և այլնի տեսքով: Ամբիոնի կողմից ֆակուլտետի դեկանին ներկայացված հիմնավորման ու թույլտվության ստացման դեպքում միջանկյալ ստուգումները կարող են կազմակերպվել գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ և կամ բանավոր:

ե/ Միջանկյալ ստուգման արդյունքները գնահատվում են տառային սանդղակով (A-F) նրա թվային համարժեքով (0-4) և վարկանիշային գնահատմամբ (1-100):

զ/Միջանկյալ ստուգումները անցկացնում են տվյալ ամբիոնի դասախոսներից կազմված խմբերը, միջանկյալ ստուգումներին հատկացված շաբաթվա շրջանակներում, առանձին ժամանակացույցով առարկային հատկացված օրերին: Ստուգումների անցկացման նկատմամբ հսկողությունը իրականացվում է դեկանատի և ուսումնական վարչության կողմից:

է/ Միջանկյալ ստուգումների ենթակա ուսումնական հատվածի բովանդակությունը, ստուգման ձևը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատ ման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին շաբաթվա ընթացքում)☐

ը/ Միջանկյալ ստուգումների ժամանակացույցը կազմում են ֆակուլտետները և հաստատվում ուսումնամեթոդական վարչության կողմից: Միջանկյալ ստուգումներն, որպես կանոն, անց են կացվում ուսումնառության տվյալ կիսամյակի 7-8-րդ և 15-16-րդ շաբաթներում: Միջանկյալ ստուգումների օրերին ուսանողն ազատվում է դասերից:

2.3. Հանրագումարային կուտակային ամփոփում

ա/ Հանրագումարային կուտակային ամփոփումը ուսանողների գիտելիքների որակի վերջնարդյունքն է՝ ուսանողի կողմից ուսումնական առարկայի կիսամակային բովանդակության ամբողջական յուրացման որակի հանրագումարային կուտակային ամփոփում, որն անց է կացվում ուսումնական կիսամյակի 17-20-րդ շաբաթներում՝ համաձայն նախորոշված ձևերի և ժամանակացույցի: Բացառիկ դեպքերում, միայն մասնագիտական հիմնարար առարկաներից, մասնագիտության ուսումնական պլանում ամրագրված և առարկայական նկարագրում առկա համապատասխան գնահատման

գործոնի/ բաղադրիչի դեպքում հանրագումարային կուտակային ամփոփումը, որպես ամփոփիչ հանրագումարային ստուգում հավասարեցվում է քննության:

բ/ Հանրագումարային կուտակային ամփոփմամբ գնահատման անցողիկ դրական շեմը չհաղթահարված առարկաների վերահանձնումները, ինչպես նաև քննության հավասարեցված հանրագումարային ամփոփումները անց են կացվում գրավոր եղանակով /բացառիկ դեպքերում, ամբիոնի հիմնավորմամբ և դեկանի որոշմամբ՝ բանավոր/:

գ/ Հանրագումարային կուտակային ամփոփման արդյունքները գնահատվում են տառային սանդղակով (A-F) նրա թվային համարժեքով (0-4) և վարկանիշային գնահատմամբ (1-100):

դ/ Հանրագումարային կուտակային ամփոփումների անցկացման ժամանակա ցույցն ամբիոնների հետ համաձայնեցված հաստատում է ֆակուլտետի դեկանը: Հանրագումարային ամփոփումների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:

ե/ Հանրագումարային կուտակային, քննության հավասարեցված հանրագումարային ստուգումների ամփոփագրերը լրացվում են ժամանակացույցով սահմանված օրը,էլեկտրոնային և թղթային տարբերակով համապատասխան ֆակուլտետի դեկանատում: Գնահատականը հրապարակելու պահից սկսած ուսանողը իրավունք ունի այն բողոքարկելու դասընթացը իրականացնող ամբիոնի վարիչին, վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը,ֆակուլտետի դեկանին: Գանգատարկումն և դրա քննարկումը իրականացվում է 24 ժամվա ընթացքում:

զ/ Յուրաքանչյուր կիսամյակում դասավանդվող առարկաներից,որպես կանոն, սահմանվում են 2 միջանկյալ ստուգում և մեկ հանրագումարային ամփոփումներ:

2.4.Շրջանավարտների ամփոփիչ ավարտական պետական որակավորում /*առանձին կարգով*/

3. Գիտելիքների գնահատում

3.1. Բազմագործոնային համակարգը.

ա/ ՈՒսանողների գիտելիքների գնահատման համակարգը ենթադրում է բազմագործոնային գնահատում: Ուսումնառության գործընթացի արդյունքը և ստացած գիտելիքների պաշարը գնահատվում է հաշվի առնելով այնպիսի բաղադրիչներ (գործոններ), ինչպիսիք են ուսանողի հաճախումները, լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքներին մասնակցության ակտիվության աստիճանը, արտալսարանային (ինքնուրույն) առաջադրանքների կատարման մակարդակը, վերլուծական, ստեղծագործական, հետազոտական աշխատանքը, ընթացիկ, միջանկյալ. քննության հավասարեցված հանրագումարային ամփոփումների արդյունքները և այլն:

Փաստորեն, ուսումնառության գործընթացի արդյունքը և ստացած գիտելիքների պաշարը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ բաղադրիչները (գործոններ),

- ուսանողի հաճախումները,

- լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքներին մասնակցության ակտիվության աստիճանը,

- արտալսարանային (ինքնուրույն)առաջադրանքների կատարման մակարդակը,

- վերլուծական, ստեղծագործական, հետազոտական աշխատանքը

- ընթացիկ, միջանկյալ և քննության հավասարեցված հանրագումարային ամփոփումների արդյունքները:

Համալսարանում սահմանվում է ուսումնառության գործընթացի արդյունքի և ստացած գիտելիքների պաշարի գնահատման բաղադրիչների/ գործոններ/ նվազագույն՝ 3 և առավելագույն՝ 5 քանակով Տես Հավելված Ա:

Հավելված Ա

օրինակ 1

բաղադրիչներ /գործոններ	**Կառուցվածք, %**
Հաճախումներ	15
Ինքնուրույն աշխատանք	15
Աշխատանք տեսական գրականության հետ/հետազոտություն	15
Միջանկյալ ստուգումներ	20
Քննության հավասարեցված հանրագումարային ամփոփում	35
Ընդամենը	**100**

օրինակ 2

բաղադրիչներ /գործոններ	**Կառուցվածք, %**
Հաճախում	10
Բանավոր խոսք	20
Գրավոր խոսք	20
Թեստային աշխատանք	20
Տեքստի վերլուծություն.	15
Արտալսարանային ընթերցանություն **Ընդամենը**	15 **100**

օրինակ 3

բաղադրիչներ /գործոններ	**Կառուցվածք, %**
Ինքնուրույն աշխատանք	20
Թիմային աշխատանք	20
Վերլուծական աշխատանք	25
Միջանկյալ ստուգում 1	15
Միջանկյալ ստուգում 2	20
Ընդամենը	**100**

բաղադրիչներ/ գործոններ	**Կառուցվածք, %**
Հաճախում	5

Ինքնուրույն աշխատանք	10
Լաբորատոր աշխատանքի կատարում և հանձնում	25
միջանկյալ ամփոփում	25
Քննության հավասարեցված հանրագումա ռային ամփոփում	35
Ընդամենը	**100**

բ/ Յուրաքանչյուր բաղադրիչի ընտրությունը և դրա ազդեցության չափը որոշվում է ամբիոնի նիստում, քննարկվում և հաստատվում կոնկրետ դասընթացի ուսումնառության վրա ազդող տարբեր բաղադրիչի կարևորությունն ու առաջնայնությունը: Յուրաքանչյուր ամբիոնի դասընթաց կարող է ունենալ վերջնարդյունքներից բխող իր առանձնահատուկ, յուրահատուկ, սակայն ոչ կամայականորեն սահմանված բաղադրիչները:

գ/ Ամբիոնները մինչև կիսամյակի սկիզբը քննարկում և հաստատում են ըստ կոնկրետ դասընթացի կոմպիտենցիաների և վերջնարդյունքի, տարբեր գործոնների արժեքն ընդհանուր կառուցվածքում, թվարկված բաղադրիչների ազդեցության աստիճանը կոնկրետ առարկայի գծով ընդհանուր գնահատականի արժևորման հաշվարկում:

դ/ Առարկային ամրագրված կրեդիտների քանակը, գիտելիքների գնահատման բաղադրիչները և դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը՝ արտահայտված տոկոսներով առարկայական նկարագրով տրամադրվում է ուսանողին դասընթացի առաջին շաբաթվա ընթացքում:

ե/ ՈՒսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում գործոններից յուրաքանչյուրը գնահատվում է 100 միավորային սանդղակի տոկոսային համամասնությամբ /Տես Հավելված Բ/:

զ/ Ամբողջ կիսամյակի / ուստարվա ընթացքում դասախոսը հաշվառում է յուրաքանչյուր ուսանողի ձեռք բերած արդյունքներն ըստ գործոնների ,գրանցում սահմանված ձևաթերթում, ձևավորում ուսանողի կուտակային գնահատականը:

3.2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) կարող է ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների

հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված

անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ և միջանկյալ ստուգումներ),

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի հանրագումարային եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ ,միջանկյալ և հանրագումարային եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3.3.Գնահատման համակարգը.

ա/ Գիտելիքի ստուգումը և գնահատումը անցկացվում է առարկայական նկարագրով հաստատված առարկայական բաղադրիչների հիման վրա տառային սանդղակով (A-F) նրա թվային համար ժեքով (0-4) և վարկանշային գնահատմամբ (1-100):

բ/ Գիտելիքի միջանկյալ ստուգումը և գնահատումը անցկացվում է գրավոր ձևով, հանդիսանում է ընթացիկ գնահատականների և մոդուլային միջանկյալ աշխատանքի հանրագումար և գնահատվում է տառային սանդղակով (A-F) նրա թվային համարժեքով (0-4) և վարկանշային գնահատմամբ (1-100):

գ/ Գիտելիքի /հանրագումարային ամփոփումը ընդգրկում է առարկայիկիսամյակային ամբողջական ծրագրային նյութը: Գիտելիքի ամփոփիչ /հանրագումարային/ գնահատումը հանդիսանում է ընթացիկ, միջանկյալ մոդուլային աշխատանքի, ամփոփիչ ստուգման գնահատականների հանրագումար և գնահատվում է տառային սանդղակով (A-F) նրա թվային համարժեքով (0-4) և վարկանշային գնահատմամբ (1-100):

դ/ Գիտելիքի ստուգման ¥ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ գնահատականներ են՝

A - B – C – D - E - դրական, Fx - F – անբավարար, I – անավարտ

F և Fx գնահատականները դրվում են ուսանողի համապատասխան ծրագրային պահանջները չկատարելու, ձախողելու և/կամ բացակայությունների դեպքում: Եթե ուսանողի կողմից ֆակուլտետի դեկանին չեն ներկայացվում բացակայության անհերքելի հիմնավորումներ, ապա տվյալ առարկայի գիտելիքի վերաստուգման կրկնակի կազմակերպվում չի թուլատրվում: Իսկ եթե ֆակուլտետի դեկանի կողմից ընդունվում են իր բացակայությունը հիմնավորող փաստաթղթերը առարկայի ամփոփման ժամանակացույցից առաջ, տվյալ առարկայի գիտելիքի վերաստուգումը կրկին կազմակերպվում է լուծարման ժամանակաշրջանում սահմանված կարգով և կամ նրան նշանակվում է “անավարտ” գնահատական, որը չունի թվային համարժեք:

ե/ “Անավարտ” գնահատականը նշանակվում է դասախոսի և ուսանողի փոխադարձ

համաձայությամբ՝ ամբիոնի վարիչի երաշխավորությամբ և դեկանի թույլատվությամբ, միայն այն դեպքում, եթե առարկայի ծավալի աշխատանքի չավարտված մասը փոքր է և “Անավարտ” աշխատանքի պատճառները, որոնք ընդունվում են դասախոսի կողմից, ինչպես նաև միջանկյալ գնահատականը տվյալ առարկայից ցածր չէ 2,7-ից:

“Անավարտ” գնահատականը կարող է նշանակվել նաև հանրագումարային վերահսկման

անցակցման օրը՝ նախապես համաձայնության գալու դեպքում, եթե ուսանողի գիտելիքները

բավարարում են նշանակման համար անհրաժեշտ չափանիշներին: Վերը նշված ձևով

վերահանձնված “Անավարտ” գնահատականը տեղեկագրերում ձևակերպվում է հետևյալ ձևով “I-B'', ''I-C'':

զ/ Յուրաքանչյուր ամփոփում /ընթացիկ,միջանկյալ կամ հանրագումարային/ գնահատվում է

առանձին: Գրավոր քննության տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի

գնահատման չափման միավորը, իսկ առաջադրանքի ծավալը՝ համապատասխանի

ընթացիկ, միջանկյալ, հանրագումարային ստուգմանը հատկացվող ժամանակահատվածին:

է/ Միջանկյալ ստուգման և հանրագումարային ամփոփումների ժամանակահատվածում ամբիոններում ստեղծվում են բողոքարկման հանձնաժողովներ:

3.4. Գնահատման մեթոդաբանությունը

ա/ՀՊՄՀ-ի կրթական ծրագրերում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում ընթացքում անցկացվող հանրագումարային եզրափակիչ ամփոփման հետ մեկտեղ նախատեսում է 2 միջանկյալ ստուգում/ամփոփում:

- միջանկյալ ստուգում հիմնականում անցկացվում են գրավոր, իսկ որոշ դեպքերում նաև բանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Ամփոփման բանավոր անցկացումը պահանջում է համապատասխան հիմնավորում և թույլատրվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

բ/ Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գարդ.) ձևավորվում է ըստ առարկայի նկարագրում առարկային տրված բաղադրիչների տոկոսներից /Տես օրինակներ Աղյուսակ Ա/

- դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության, ոչ ավելի քան 100 միավորի 5 տոկոսը
- ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 միջանկյալ ամփոփումների արդյունքներից (ՏՔմիջ.), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է ոչ ավելի քան 100 միավորի 40 տոկոսը
- կատարած անհատական, ինքնուրույն աշխատանքից(Քինք.),,ներկայացրած գրավոր նյութերից / ռեֆերատ, հետազոտական աշխատանք/ ոչ ավելի քան 100 միավորի 15 տոկոսը
- դասընթացի առանձնահատկություններից բխող այլ աշխատանքներից(Քդա),,, ոչ ավելի քան 100 միավորի 10 տոկոսը
- հանրագումարային եզրափակիչ ամփոփման / քննության /արդյունքից (Քեզր.), որը կարող է գնահատվել ոչ ավելի քան 100 միավորի 30 տոկոսը

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրիչներով վաստակած միավորների գումար՝

Գարդ. = Գմաս. + ՏՔմիջ. +Քինք + Քդա + Քեզր.:

3.5. Միջանկյալ և հանրագումարային եզրափակիչ ամփոփումների գնահատման կազմակերպումը

ա/Միջանկյալ և հանրագումարային եզրափակիչ ամփոփումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, ամփոփումների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին շաբաթվա ընթացքում)☐

բ/Միջանկյալ և հանրագումարային եզրափակիչ ամփոփումների ժամանակացույցները կազմում են ֆակուլտետները, և հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Ամփոփումների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնական վարչություն:

գ/Միջանկյալ ամփոփումները անց են կացվում ուսումնառության կիսամյակի 7-8-րդ և 15-16-րդ շաբաթներում: Միջանկյալ ամփոփումների օրը ուսանողն ազատվում է դասերից: Միջանկյալ ամփոփումներն անց են կացվում առարկայի՝ դասացուցակով հատկացված ժամերին կամ դասերից հետո՝ ֆակուլտետի դեկանի որոշմամբ:

դ/հանրագումարային ամփոփումներն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 17-20-րդ շաբաթներում:

Միջանկյալ և հանրագումարային ամփոփման ավարտից հետո գործընթացն իրականացրած դասախոսը / հանձնաժողովը ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է դեկանատ☐

ե/Բոլոր գրավոր ստուգումները գրանցվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տետրերում, իսկ գրավոր աշխատանքի ավարտը վավերացվում է դեկանատի կնիքով:

զ/Միջանկյալ և հանրագումարային չ ամփոփումների գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին,իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:/ժամկետ?/

3.6. Գնահատման սանդղակը և նշագրումը

ա/ ՀՊՄՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկա յացված է ստորև.

Հավելված Բ

Գնահատական բացվածքային համակարգ	Տառային գնահատական	Ուսանողների գիտելիքների բնութագիր	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը
100-97 96 - 90	A	Լիարժեք գիտելիքներ առանց սխալների Լիարժեք գիտելիքներ թույլատրելի քանակությամբ երկրորդական սխալների մի քանի դեպքերով	4, 0 3, 7
89-85 84-80	B	Լավ արդյունք, առկա են երկրորդական սխալների մի քանի դեպքեր Ընդհանուր առմամբ լավ է, բայց առկա են հիմնական խնդրի վերաբերյալ որոշ սխալներ	3, 3 3, 0
79-70	C	Գիտելիքների ընդունելի մակարդակ՝ զգալի թերություններով	2, 7
69-65	D	Գիտելիքների ընդունելի մակարդակ՝ լուրջ թերություններով	2, 3
64-60	E	Գիտելիքները ցածր են, բայց ընդհանուր առմամբ բավարար են դասընթացի հիմնական գաղափարների ընկալման համար: Առկա են հիմնական և երկրորդա կան սխալներ:	2, 0
59-54	Fx	Շատ թույլ գիտելիքներ, որոնք բավարար չեն դասընթացի ընկալման համար: Առկա են մի շարք հիմնական սխալներ:	1, 7
53-40	F	1. Գիտելիքների անընդունելի մակարդակ: 2. Ուսումնասիրվող առարկայի վերաբերյալ գիտելիքի բացակայություն	1, 0
Ավարտված չէ	I	Ուսանողը գնահատվում է միայն այն դեպքում, եթե աշխատանքի անավարտ մասը քիչ է և չավարտելու վերաբերյալ ուսանողի բերած փաստարկները ընդունելի են դասախոսի համար	-

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում գնահատման վարկանիշային միավորի հետ մեկտեղ նշվում է նաև ECTS-ի համապատասխան տառային գնահատականը և գնահատականի պաշտոնական թվային համարժեքը :

բ/ Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 60-ից ցածր վարկանշային միավոր կրեդիտներ չեն տրվում և համարվում է անբավարար:

3.7. Հանրագումարային ամփոփումների արդյունքով վերահանձնում

ա/ Միջանկյալ ստուգման և հանրագումարային ամփոփումներին չներկայանալը համարվում է հարգելի ժամանակացույցով նշանակված օրը դիմումով վավերացված անառողջության տեղեկանքի և կամ դեկանի կողմից ընդունվող այլ անհերքելի պատճառների դեպքում:

բ/ Հարգելի պատճառով միջանկյալ ստուգումների չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել անառողջության տեղեկանքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հնգօրյա ժամկետում, դեկանատի կողմից հաստատված անհատական ժամանակացույցով:

գ/ Մնացած դեպքերում միջանկյալ ստուգման վերահանձնում չի թույլատրվում:

դ/ Հանրագումարային ամփոփումների արդյունքով վերահանձնումը կազմակերպվում է դեկանատում առկա առարկայի ամփոփիչ էլեկտրոնային տեղեկագրում վավերացված գնահատականի հիման վրա:

Յուրաքանչյուր առարկայից սահմանվում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) երկու շրջան, եթե վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է F կամ Fx-ի և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքն ավելի է կամ հավասար 40-ի և քիչ է 59-ից:

ե/ Վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են դեկանի հրամանով:

զ/ Դասընթացներից չի սահմանվում ակադեմիական պարտքերի մարում,եթե տվյալ առարկայից ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է Fx-ի և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքն ցածր է քան 40-ը:

է/ Հանրագումարային ամփոփումների ընթացքում դասընթացներից պարտք ունեցող ուսանողների ուսման ընդհատման հանգամանքը /հեռացումները/ կարգավորվում են ՀՀ ԿԳՆ-ի համապատասխան կարգով:

ը/ Հեռացված ուսանողների հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

ը/ Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակային դասընթացները ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

4. Վարկանիշային համակարգը և ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

Համալսարանում կիրառվող՝ ուսանողների ակադեմիական առաջադիմության գնահատման և վերահսկողության բոլոր ձևերը, որոնք կիրառվում են ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտավարկանիշային համակարգով աշխատող ուսման բոլոր ձևերի համար, իրականացվում են ուսանողների ակադեմիական առաջադիմության միջին որակավորման գնահատականի և այլ ակադեմիական վարկանիշների հաշվարկի սկզբունքներին համապատասխան: Ուսանողների ակադեմիական վարկանիշը հաշվարկվում է ֆակուլտետի կողմից և հաստատավում՝ ֆակուլտետի դեկանի կողմից:

4.1. Ուսանողների վարկանիշները

ա/ Ուսանողական պլանով նախատեսված յուրաքանչյուր առարկայի համար (բացառությամբ ֆիզդաստիարակության, առարկաի, որն որակավորման պահանջների մեջ չի մտնում, ուսանողին շնորհվում է վարկանիշային միավորներ կախված ուսանողի առաջադիմությունից և տվյալ առարկայի համար հատկացված աշխատատարության ակադեմիական կրեդիտների քանակից:

բ/ Տվյալ կիսամյակի ակադեմիական վարկանիշը կոչվում է ընթացիկ ակադեմիական վարկանիշ և հաշվարկվում է տվյալ կիսամյակի առաջադիմության հիման վրա:

գ/ Ուսման բոլոր կիսամյակի ակադեմիական վարկանիշը կոչվում է կուտակային վարկանիշ:

դ/ Ուսանողների ակադեմիական վարկանիշը հաշվարկվում է գումարելով վարկանիշային միավորները, որոնք ուսանողները ստանում են միջանկյալ /որոշ դեպքերում նաև հանրագումարային/ ստուգումների արդյունքներից:

Ուսանողների ակադեմիական վարկանիշները կարող են օգտագործվել.

կրթության շարունակականության ապահովման համար

ուսմառության մեկ համակարգից մյուսը տեղափոխվելու համար,

կրթաթոշակ նշանակելու համար, անվանական կրթաթոշակներին ներկայացնելու հա

մար,

վճարովի հիմունքներով սովորողի ակադեմիական առաջադիմության հիման վրա վարձը փոխհատուցելու համար,

այլ նպատակներով:

4.2.Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

ա/ Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ՀՊՄՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

բ/ Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

գ/ Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

– Ծրագրային կրեդիտների քանակը,

- -որակավորման կրեդիտների քանակը,

– վարկանիշային միավորները,

– միջին որակական գնահատականը ☐

դ/ Որակավորման կրեդիտը (ՈԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

ե/ Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար:

ՎՄ հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց Թվային գնահատականների արտադրյալների գումար.

ՎՄ = Σ Կրեդիտ i Գ արդ i

որտեղ Գարդi-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված թվային գնահատականն է:

4.3. Ուսանողների միջին որակավորման առաջադիմությունը **(GPA)**

ա/ Ուսանողի ակադեմիական առաջադիմության Միջին որակավորման գնահատականը **(GPA - Grade Point Average)** իրենից ներկայացնում է վերջնական և կշռված ցուցանիշ, որը հաշ-

վարկվում է ուսման որոշակի ժամանակահատվածի համար (1 կիսամյակ, 2 կիսամյակ և այլն) և հաշվվում է վարկանիշային միավորների բաժանումով տվյալ ժամանակահատվածի

որակավորման կրեդիտների վրա:

GPA ցուցանիշի արժեքը կլորացվում է մինչև 0,01.

GPA =R(m)/ ՈԿ,

որտեղ

R (m) - վարկանիշային միավորներն են,

ՈԿ - որակավորման կեդիտներն են:

բ/ Տվյալ կիսամյակի արդյունքներով հաշվարկված GPA-ը կոչվում է միջին որակավորման գնահատականի ընթացիկ ցուցանիշ:

գ/ Վերջնական GPA (ուսման ամբողջ ժամանակահատվածի համարº հաշվարկվում է առանձին ուսման ժամանակահատվածի GPA-ների հիման վրա, համաձայն բանաձևի, եթե այդ ժամանակահատվածի ուսումնական ծանրաբեռնվածությունը նույն աշխատատարությունն ունեն.

Հավելված

Ակադեմիական տեղեկագրի օրինակ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Անուն Հայրանուն Ազգանուն Պողոս Պողոսի Պողոսյան

Ֆակուլտետ կուրս խումբ Օտար լեզու և գրականություն / Անգլերեն/ 1-1

Աշնանային կիսամյակ				
Դասընթացի անվանումը	Կրե-դիտ	Գնահատական		
		Վարկանիշային	Տառային	Թվային
Դասընթաց 1	10	98	A	4,0
Դասընթաց 2	6	95	A	3,7
Դասընթաց 3	4	88	B	3,3
Դասընթաց 4	4	93	A	3,7
Դասընթաց 5	2	82	B	3,0
Դասընթաց 6	4	75	C	2,7
ՈԿ	30			

ՈԿ=10 + 6 + 4 + 4 + 2 + 4 = 30
ՎՄ =10 x 4.0 + 6 x 3.7+ 4 x 3.3 + 4 x 3.7 + 2 x 3.0 + 4 x 2,7 =107,0
ՄՈԳ=107,0 / 30=3.57

ԾԿ	ՈԿ	ՎՄ	Կիսամյակային ՄՈԳ
30	30	107.0	3,57

Գարնանային կիսամյակ				
Դասընթացի անվանումը	Կրե-դիտ	Գնահատական		
		Վարկանիշային	Տառային	Թվային
Դասընթաց 1	12	83	B	3,0
Դասընթաց 2	4	98	A	4,0
Դասընթաց 3	6	92	A	3,7
Դասընթաց 4	2	76	C	2,7
Դասընթաց 5	4	100	A	4,0
Դասընթաց 6	2	65	D	2,3
ՈԿ	30			

ՈԿ=12 + 4 + 6 + 2 + 4 + 2 =30
ՎՄ =12 x 3.0 + 4 x 4.0 + 6 x 3.7+ 2 x 2.7+ 4 x 4 .0 + 2 x 2,3 =100,20
ՄՈԳ=107,0 / 30=3.34

ԾԿ	ՈԿ	ՎՄ	Կիսամյակային ՄՈԳ
30	30	100.20	3.34

Ընդհանրացված արդյունքները			
ԾԿ	ՈԿ	ՎՄ	Ամփոփիչ ՄՈԳ
60	60	207,20	3,45

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը։